ՀԵՂԻՆԷ

Վ. Է Պ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ПА-1310

I

Ալատարինէի մահից յետոյ անցաւ մէկ-երկու ամիս։ Սահաուու-նու սիրտը քիչ-քիչ հանգստանում էր և նա ընտելանում էր իւր նոր դրութեանը։ Նա նկատում էր, որ միայնակութեան մէջ նորա սրտում հեռզհեռէ նսեմանում, ջնջւում էր հանգուցեալ կնոջ պատկերը, իսկ նորա փոխարէն աւելի ու աւելի որոշ պատկերանում մի ուրիշ էակ, որին վաղուց նա սիրում էր։

«Զէ՛, որքան հեռու լինեմ նորանից՝ այնքան լաւ է, իմ սէրս նորան բախտաւորութիւն չի տայ։

Դուռը թրրխկթիկացրեցին. նա սթափւեց իւր մտախոհութիւնից։ Նամակաբերն էր։ Նա շտապելով ճղեց ծրարը և սկսեց կարդալ։

Մայրը գրում էր, որ իրան շատ վատ է զգում. առողջութիւնը օրէցօր վատանում է. կալւածը, որ ինքը կառավարել չի կարողանում հիւանդութեան պատճառով, անտէր մնալով փչանում է. հարի, աչքիս լոյսը, մի թող հօրդ օջախը քարուքանդ լինի, արի մէկ էլ

[illegible]

քո երեսը տեսնեմ, սրտիս կարոտն առնեմ։ քանի ձմեռ, քանի գարունք անց կացաւ, որ քեզ չեմ տեսել, էլ չեմ կարողանում դիմանալ։

«Լե՛ղճ մայրիկ», ասաց Սահառունին կարդալով նամակը։ Այդ առաջին անգամն էր որ նա իղձատանջւում էր մտածելով իւր որդիական պարտականութիւնների մասին։ Նա ինքն էլ վաղուց ուզում էր գնալ տեսնել մօրը, ինքն էլ կարօտ էր զգում, բայց իւր սէրը մօր սէրի նման չէր, թէ չէ նա մինչև այժմ գնացած կը լինէր նորան տեսնելու. մօր աչքերը ջուր էր կտրել նորա ճանապարհը պահելով, իսկ նա այսօր-էգուց զցելով այսքան տարի չէր կարողացել մի քանի օրով գնալ մօր մօտ...

Հէնց միւս օրը նա ինդիրք տւեց ու պաշտօնից երկու ամսւայ արձակուրդ ստացաւ։

—Երկու-երեք օրից յետոյ պէտք է ճանապարհ ընկնել, վճռեց նա և ուզում էր գնալ Ամիրանովների մօտ, բայց յանկարծ ճանապարհին միտքը փոխեց ու ճանապարհը ծռեց դէպի ուրիշ կողմ։ Մի հինգ րոպէ չ'անցած նա պատահեց Ամիրանովին, որ դուրս եկաւ մի նպարավաճառի խանութից ուտելեղէնի ու խմիչքի ահագին պաշարով։ Լաւ է, որ չը գնացի նրանց տունը, երևի այսօր ինչոյք ունի ու մեծամեծների է հրաւիրել, մտածեց Սահառունին ու քայլերն ուղղեց դէպի Եւրոպա հիւրանոցը, յուսալով որ այնտեղ կը պատահի ընկերներին։

Աւաւօտեան ժամն էին։ Աշունքւայ արեգակը ուրախ խաղում էր Ամիրանովների դեղեցիկ հիւրասենեակում, ծիրանի դոյնով ներկելով բոլոր առարկաները. ցօղաղարդ ծառերը փայլփլում էին ծիածանի բոլոր գոյներով. հեռւում Կովկաս սարերի ձիւնապատ գագաթները՝ շողշողելով արևի ճառագայթներից՝ հրաշալի տեսարան էին ներկայացնում։ Հեղինէն նստած պատուհանի մօտ՝ սուրճի բաժակն առաջին՝ զմայլած դիտում էր բնութեան գեղեցկութիւնները։

—Հեղիկ, ի հարկէ չես մոռացել, որ այսօր մեզ մօտ կը ճաշեն իմ մեծաւորը և նորա բարեկամներից մի քանիսը. տես որ ամեն բան տեղին լինի, ասաց Ամիրանովը մտնելով սենեակը ու ինքնագոհ, ուրախ-ուրախ շփելով ձեռները։

—Դիտեմ, մի քանի անգամ արդէն ասել ես ինձ, սառը-սառը պատասխանեց կինը։

—Որքան շնորհք ունես, հոգիս, գործ դիր. պէտք է որքան կարելի է լաւ հիւրասիրել նորան, առաջին անգամն է որ նա ինձ այդպիսի պատիւ է արժանացնում։

Այդ բոպէին սենեակը մտաւ իւր սովորական հանդարտ, սննկատելի քայլուածքով Եփեմիան։

—Բարև, Եփեմիա, ինչ լաւ ժամանակ եկար, քեզ հետ բան ունեմ, ուրախ-ուրախ դիմաւորեց նորան Ամիրանովը։ Թամարի համար փեսացու եմ գտել. մի քիչ ծեր է, բայց ամեն կողմից ձեռնտու է։ Խնդրեմ իրան ոչինչ չասես, պէտք է յանկարծ աչքալուսանք տանք ու...

—Ժամանակ չը տալ, որ մտածի, շարունակեց նորա տեղակ Հեղինէն։

Պէտք է, շարունակեց Ամիրանովը ուշք չը դարձնելով Հեղինէի նկատողութեան վրայ, ձեռաց գործը սկսել ու գլուխ բերել։

Այրին ընկաւ մտածմունքների մէջ և լուռ նայում էր մէկ եղբօրը՝ մէկ հարսին։

—Չեմ հասկանում, թէ ինչու չես ուզում Թամարին ժամանակ տալ այդպիսի մի նշանաւոր հարց վճռելու համար. ինչ կարեւորութիւն կայ այդպէս շտապելու...

—Զարմանալի մարդ ես, Հեղինէ, ամենքին քո չափովն ես չափում։ Ինչո՞ւ ես մոռանում, որ քոյրս ոչ սիրուն է, ոչ ջահէլ, ոչ էլ հարուստ, որ փեսացուները գլխապատառ վազ տան պսակելու։ Հազիւ է մի փեսացու ընկել ճանկներս, ուզում ես որ նա էլ փախչի։ Նատ խելօք են ասել՝ «երկաթը տաք-տաք կը ծեծեն»։

—Ինքդ էլ չես հասկանում, թէ ինչ ես ասում...

—Ցեռոյ, լեռոյ կը խօսենք դորա մասին, այժմ վիճելու ժամանակ չի, անհամբերութեամբ կտրեց նորա խօսքը մարդը։ Դու պէտք է դեռ ուրախանաս, որ էլ իմ վրայ չեն խօսի, թէ քրոջս չեմ աշխատում մարդու տալ։

Հեղինէին դուրս կանչեց աղախինը։

Եփեմիան եղբօր հետ մենակ մնալով պինդ փակեց դուռն ու սկսեցին քչփչալ։

—Գիտե՞ս, մի շաբաթ կը լինի ինչ քեռին արտասահմանից վերադարձել է։ Զարմանալի բան է, այսօր առաւօտը ինքը մարդ էր ուղարկել որ Թամարը գնայ իւր մօտ։

—Առողջութիւնն ի՞նչպէս է։

—Շատ վատ։ Անկողնիցը չի՞կարողանում վեր կենալ։ Բժիշկներն ասում են, որ շատ չի ապրի։

—Էլի այն կիսակոյր աղջական կինն է նորան պահում։

—Հա։

—Էլի առաջուայ պէս ոչ ոք չի լինում նորա մօտ։

—Ոչ ոք բացի Ելիզաւետա Բոգդանովնայից։

—Այդ գիտեմ։

—Մէկ-երկու անգամ էլ նորա մօտ Պետրոսեանցին եմ տեսել, որին ինչպէս երևում է նա շատ յարգում է։

—Հը՛մ... իսկ կտակի մասին բան չե՞ս իմացել, կա՞յ թէ չէ։

—Շատ աշխատեցի, բայց չը կարողացայ բան իմանալ։ Թամարը այդ աւելի հեշտ կարող է իմանալ։ Քեռին ասում է, որ Թամարը իւր քրոջն է գցել, իսկ մենք երկուսս մեր հօրն ենք նման։ Իմ կարծիքով, դժուար թէ նա կտակ կազմած լինի. Նորա նման մարդիկ վախենում են կտակ կազմելուց՝ կարծելով որ այդ կեանքները կը կարճացնի։ Բայց ով է իմանում կարելի է կազմած էլ լինի։ Թէ իմանայ այդ՝ էլի Թամարը կիմանայ։ Իմ կարծիքով սխալ բան կանես որ Նորան հիմայ պսակես. այսքան սպասել է, աշխարհքը չի քանդուի որ մի քիչ էլ սպասի. հիմա նա մեղ պէտք է. հասկանո՞ւմ ես։

Եփեմիան լաւ գիտէր, որ Թամարը այժմ Նորա խօսքիցը չէր անց կենում ու՝ ինչ որ հրամայում էր՝ կատարում էր, որովհետև կախումն ունէր Նորանից։ Նա ու եղբայրը կարող էին Թամարին իրանց ձեռքում գործիք շինել իրանց նպատակին հասնելու համար յոյս տալով որ Նորան կը վարձատրեն, Նորա համար լաւ փեսացու կը գտնեն ու կը պսակեն։ Մարդու գնալուց յետոյ Թամարը էլ չէր ուզենալ նրանց ձեռքում գործիք լինել։

—Ճիշտ ես ասում, ձեռնտու չի Թամարին այժմ պսակելը, մի քիչ մոռածելուց յետոյ ասաց Ամիրանովը ու ուզում էր ինչ-որ աւելացնել, բայց այդ ժամանակ կողքի սենեակից, լսեց Հեղինէի ոտնաձայնը և նրանք լռեցին։

—Ես պէտք է մի ժամով տանից դուրս գամ, դիմեց նա Հեղինէին երբ որ նա մտաւ սենեակը, աշխատիր լաւ ընդունել հիւրերին, քաղցրութեամբ աւելցրեց նա ու, համբուրելով կնոջ ճակատը, դուրս եկաւ սենեակից։ Եփեմիա, մնայ մեզ մօտ, օգնիր Հեղինէին, ձայն տուեց նա սրահից։

—Ես հէնց դորա համար եմ եկել, պատասխանեց Եփեմիան ու գնաց խոհանոց տեսնելու թէ խոհարարը ինչպէս է պատրաստում կերակուրները։

Հեղինէն մարդուն ճանապարհ դրեց հեգնական ժպիտով և ընկաւ մտածմունքների մէջ։ Մտածում էր Հեղինէն իւր սև բախտի մասին և երկար կը մնար նա այդպէս տխուր մտածմունքների մէջ, եթէ նորան չը սթափեցնէր մի քանի անգամ կրկնուող ուժգին զանգահարութիւնը։

—Ահ, դու ես, Աննա ջան, այս ինչ է այսքան ժամանակ է սկի չես երևում։ Ներողութիւն, Դաւիթ Աբրամիչ, ձեզ չը նկատեցի։ Ինչ տեսակ մարդ ես, Աննա, էլի լաց ես եղել, հէրիք է, հոգիս, մինչև երբ պէտք է լաց լինես։ Ողորմած հոգի մայրդ այնքան տանջուեց, որ...

—Ախ, Հեղինէ ջան, թող թէկուզ մինչև իմ կեանքիս վերջը այդպէս պարկէր, ես նորան կը պահէի... Այսօր ուղիղ երկու ամիս է նորա մեռնելու օրից և ինձ թւում է...

Արտասուքը խեղդեց Աննային, էլ չը կարողացաւ շարունակել։ Հեղինէն գրկեց նորան։ Թոմաևը յուզուած նայում էր քնքշութեամբ օրիորդի վերայ։ Նորա լիքը ու կարմիր երեսը մի քիչ փոխուել էր մօր մահից յետոյ, բայց այդպէս նա աւելի էլ սիրուն էր երևում։ Նա ոչ մի ժամանակ այնքան գրաւիչ չէր թւել Թոմաևին ինչպէս այդ սգաւորի անպաճոյճ զգեստում։

—Մենք նոր գերեզմանատանն էինք, ես ու մօրաքոյրս. Դաւիթ Աբրամիչը այնքան բարի եղաւ, որ մեզ ուղեկցեց։

—Հանգստացէք, օրիորդ, աւելի լաւ է ձեր գործի մասին խօսէք, ասաց Թոմաևը մօտենալով նրանց։

—Սա տեսնենք, Աննա, յաղթեցիր ազգականներիդ թէ թողցիր վարժուհի դառնալու մտադրութիւնդ։

—Չէ, օրէցօր աւելի սաստիկ եմ զգում վարժուհութեամբ պա-

բապելու պահանջը։ Այժմեան դրութիւնս, մանաւանդ այն օրից երբ որ եղբայրներիս Ռուսաստան ուղարկեցին, հետզհետէ աւելի ու աւելի անտանելի է դառնում ինձ համար։ Ես չեմ ուզում բեռը լինել մօրաքոյրներիս համար, մանաւանդ որ նրանք իրանք էլ հարուստ չեն։

—Ի հարկ է, ճիշդ ես ասում։

—Դուք հեշտութեամբ կ'ընտրելանք ձեր նոր դրութեանը. դուք սովոր էք աշխատանքի, քաջալերում էր Թոմաեւը.

—Օ՛ֆ, ես աշխատանքից չեմ վախենում, այլ...

—Ձանազան ասէկոսէներից. ինչ ասեմ այդ մօրաքոյրերին ու քեռիներին։ Էհ, Աննա Արտեմիևնա ինչ էք նրանց խօսքերը բանի տեղ դնում։

—Ինձ էլ երբեմն թւում է թէ պէտք չէ ուշք դարձնել, բայց էլի...

—Դու այն ասա, Աննա, գլուխ դալիս է ուզածդ թէ չէ, կտրեց նորա խօսքը Հեղինէն։

—Հա, Դաւիթ Աբրամիչն ու Պետրոսեանցը ինձ համար վարժուհու տեղ են ճարել. չեմ կարող ասել որքան շնորհակալ եմ նրանից, զդացուած ասաց օրիորդը քնքշութեամբ նայեց Թոմաեւին։

—Ինձ զուր էք շնորհակալութիւն յայտնում, Աննա Արտեմիևնա. ինչպէս երևում է ինձ դեռ լաւ չէք ճանաչում։ Ես նորա համար էի աշխատում ձեզ համար վարժուհու տեղ գտնել, որովհետև այդ ինձ զւարճութիւն էր պատճառում, ուրեմն իսկապէս ես ինքս ինձ և ոչ թէ ձեր համար էի աշխատում, ասաց Թոմաեւը մի քիչ յօնքերը կիտելով։

—Մուացնե՞լ ես, Աննա, որ Դաւիթ Աբրամիչը չի սիրում, որ իրան շնորհակալութիւն յայտնեն։

—Ճիշդ որ չեմ սիրում, տիկին Հեղինէ, և կարծում եմ որ հիմք էլ չը կայ շնորհակալութիւն անելու։ Ցիշո՞ւմ էք, քանի-քանի անգամ մենք վիճել ենք և ես աշխատել եմ ապացուցանել, որ մարդկանց բոլոր դործերի, վարմունքի միակ դրդիչը եսականութիւնն է։

—Ի՞նչպէս թէ բոլոր դործերի։ Մի՞թէ դուք ոչ մի բացառութիւն չէք ընդունում. մի՞թէ ծնողներն էլ ձեր կարծիքով եսականութիւնից դրդուած են խնամում իրանց զաւակներին։

—Ի հարկէ։ Եթէ ծնողները զարմութիւն չը զգային իրանց զաւակներին ինամելուց, նրանք իրանց՝ ինչպէս ասում են՝ ծնողական պարտականութիւնների կէսի-կէսն էլ չէին կատարել։ Կը նշանակի մարդիկ մի լաւ բան անելիս ամենից առաջ իրանց իրանց են զարմութիւն պատճառում, հետևաբար և աւելորդ է շնորհակալութիւն յայտնել նրանց դորա համար. այնպէս չէ՞, Աննա Արտեմիեւնա։

Օրիորդը զգացմունքով ու շնորհակալութեամբ լի աչքերով նայեց Թոմաեւին։ Նա նկատեց այդ հայեացքը և սաստիկ ուրախացաւ։

—Ցանկանք այժմ օրիորդին կատարեալ յաջողութիւն իւր նոր գործի մէջ և մնաք բարև ասենք ձեզ. մօրաքոյրը մեզ սպասում է կառքում։

—Ախ, ես բոլորովին այդ մոռացել էի։

—Մնայ ինձ մօտ, Աննա ջան։

—Չեմ կարող, պէտք է պատրաստուեմ նոր պարտականութիւններս կատարելու համար, ժպտալով պատասխանեց օրիորդը։

Նրանց գնալուց մէկ-երկու րոպէ չ՝անցած ներս մտաւ Սահառունին։

—Ճանապարհին մի հրաշալի զոյգի պատահեցի, տիկին Հեղինէ։

—Գիտեմ, նոր այստեղ էին։ Ով կը կարծէր որ այդ անշնորհք ու սառը Թոմաեւը կարող է այդ աստիճան գրաւել։

—Գիտէք, ամբողջ ամիս է ինչ Դաւիթը գիշեր-ցերեկ հանգիստ չ՝ունէր, գժի նման այս կողմ այն կողմն էր ընկնում, մինչև որ վերջապէս տեղ գտաւ իւր Աննայի համար։

—Ասում են՝ այնպէս զբաղուած է եղել դրանով, որ ձեռքից բաց է թողել մի գործարանի կառավարչի պաշտօն, որ նա շատ հեշտ կարող էր ստանալ։

—Այսինքն բաց կը թողնէր եթէ Պետրոսեանցն ու ուրիշ ընկերները չաշխատէին նորա համար։

—Ճիշտ են ասել՝ չէ՞, Գէօրգի Ալէքսանդրովիչ, մարմանդ ջուրը շատ խոր կը լինի։

—Ճիշտ է, մտախոհ կերպով պատասխանեց Սահառունին։

Հեղինէին դուրս կանչեցին. ծառաներն իրար անցան։ Նա՝ ինչ որ պէտք էր՝ պատուիրեց, կարգադրեց ու վերադարձաւ հիւրասենեակը։

—Եթէ չեմ սխալուում, այսօր հիւրերի էք սպասում, դիմեց Նորան Սահառունին։

—Էլ մի ասէք, մեծամեծ հիւրերի։

—Ինձ թւում էր թէ երէկ պէտք է ձեզ մօտ հիւրեր լինէին։

—Ապա թէ ոչ ի հարկէ չէիք գալ մեզ մօտ այսօր։ Լաւ է որ սխալուել էք։ Զէք կարող երևակայել, թէ որքան ձանձրալի է ինձ համար Նորանց հետ նստել—խօսելը...

Նա ուզում էր շարունակել։ բայց վախենալով որ բերնից էլի յանկարծ մի բան կը թռցնի, ցոյց կը տայ իւր միջ կատարուող ներքին կռիւը, լռեց։ Սակայն զուր էր այդ զգուշութիւնը. Սահառունին շատ լաւ էր հասկանում այն գաղտնիքը, որ աշխատում էին պահել Նորա սեղմած շրթունքները, ոչ մի լեզու այնպիսի ճարտարախօս կերպով չէր կարող արտայայտել Նորա սրտի յուզմունքները ինչպէս Նորա մարած, մոահոգ աչքերը։

Հեղինէն աշխատում էր ցրուել իրան պաշարող մտքերը, հանգստացնել սրտի ալէկոծութիւնը զբաղուելով հիւրերի ընդունելութեան համար անհրաժեշտ պատրաստութիւններով. մեքենայաբար կարգի էր բերում սենեակը, սարքում էր։ Սահառունին ցաւատանջ հայեացքով նայում էր Նորան։ Նա վերցրեց մի գիրք և սկսեց թերթել. նայում էր տպած էջերին, բայց ուշքը մոածմունքների հետ էր.—չէ՛, երբէք չի զոհացնիլ Նորան այն կեանքը, այն մթնոլորտը, ուր քաշում ձգում է Նորան մարդը...

Ճաշի ժամանակը մօտենում էր։ Սահառունին վերցրեց գլխարկը։

—Ո՞ւր։

—Խաչը, չեմ կարող։

—Միթէ մի չնչին զոհողութիւն չէք կարող անել իմ խաթեր։

—Ինչ զոհողութիւն է այդ որ, ծիծաղեց Սահառունին։

—Ի՞նչ էք աշխատում ինձ խաբել, ես գիտեմ որ մեր այսօրուայ հիւրերի հետ ժամանակ անցնելը ձեզ ահաւութիւն կը պատճառի, բայց այնու ամենայնիւ ես չեմ թողնի որ գնաք, որովհետև եթէ դուք այստեղ լինէք այսօրուայ ճաշը ինձ այնքան անուանելի չի թուի։

Հեղինէի ժպիտը այդ ասելիս և այն մուերմական հայեացքը, որով նա նայում էր Նորան գլխարկը ձեռքից առնելիս, բոլորովին

զինաթափ արեցին Սահառունուն. նա ոչինչ չը կարողացաւ պատասխանել և մնաց։

Ցանկարծ նորա յետևին լսեց իշխան Շակունու ձայնը։ Նա Ամիրանովի հետ ներս մտաւ։

—Օհօ՛, սիրելի Գէօրգի Ալեքսանդրովիչ, գնո՞ւմ էք։ Զէ, ուր էք գնում, կացէք միասին ճաշենք։

Հեղինէն ուրախ—ուրախ փաթաթուեց քեռու վզովը։

—Սկի չէի սպասում, ե՞րբ էք եկել։

—Ասա տեսնենք, սիրունս, ինչպէս է քէֆդ, հալդ, ասաց Շակունին ու գրկեց Հեղինէին։ Լոյսին մօտեցիր, մի լաւ նայեմ քեզ, ինչքան ժամանակ է չեմ տեսել, շարունակում էր նա շուռ. է շուռ տալով քրոջ աղջկանը։

Սահառունին նորից սկսեց մնաս բարև անել, բայց Շակունին բռնեց կուռը ու զօռով նստացրեց։

Ես քրոջս աղջկայ տան տէրն եմ, այնպէս չի՞, Միխայիլ Պետրովիչ։ Ի՞նչ ես սուս կենում, ինչո՞ւ չես ընկօրդ համոզում որ մնայ։

Ամիրանովը թթուած դէմքով կիսաբերան ասաց,—ճաշին մնա մեզ մօտ։

—Չը գիտէ՞ք, Գէօրգի Ալեքսանդրովիչ, որ քեռին սաստիկ վիրաւորանք է համարում իւր համար եթէ իւր խաթրը կոտրում են, չը կատարելով այդպիսի մի չնչին խնդիրք, կամաց ասաց Հեղինէն Սահառունուն։

—Գիտեմ և այդ պատճառով կը մնամ, ժպտաց նա և շարունակեց ընդհատուած խօսակցութիւնը Շակունու հետ։

Մինչ այդ՝ հիւրերը քիչ քիչ հաւաքուեցին, վերջապէս եկաւ և նա, որի խաթեր սարքուած էր այդ խնջոյքը։ Ամիրանովը դէմքին պատշաճաւոր արտայայտութիւն տուեց և խոնարհաբար խնդրեց Նորան նստել ճաշի։ Ճաշի ժամանակ գեներալ Կ-ի ուշադրութիւնը ուղղուած էր գլխաւորապէս տանտիկնոջ վերայ, որ Նորա կողքին էր նստած։ Իսկ նա անդադար երեսը շուռ էր տալիս և ականջ դնում սեղանի միւս ծայրում նստողների խօսակցութեանը։

—Այդ ինչի մասին էք, պարոններ, այդքան տաք—տաք խօսում, որ մինչև անգամ գեղեցիկ սեռն էլ գրաւել է ձեր խօսակցութեամբ.

—Մենք, ձերդ գերազանցութիւն, վիճում ենք, թէ արդեօք լաւ կը լինէր որ Թ-սում համալսարան հիմնուէր թէ չէ, պատասխանեց հիւրերից մէկը։

—Հա, ես էլ լսել եմ, որ քաղաքացիք ուզում են յարմար առիթ պատահելիս խնդրել, որ այստեղ համալսարան հիմնեն, բայց սխալւում են, դրանից բացի մեսից ոչինչ չի ստանայ քաղաքը, ինքնավստահ կերպով ասաց գեներալը գինի լցնելով Հեղինէի բաժակը։

—Ինչո՞ւ որ, Թոյլ տուէք հարցնել, զարմացած հարցրեց Սահառունին։

—Որովհետև առանց այն էլ ձեր երիտասարդները տաք—գլուխ են, համալսարանական կեանքը աւելի կը բորբոքի նրանց և նրանք՝ փոխանակ իրանց գործով պարապելու՝ կ'սկսեն զանազան երևակայական գաղափարների ու ցնորքների յետևից ընկնել...

Վէճը դարձաւ ընդհանուր։ Սահառունին սկսեց խօսել գեներալի դէմ։ Իշխան Շակունին իւր բարձրաձայն բացականութիւններով և Հեղինէն երբեմն—երբեմն մի քանի կցկտուր կիսաձայն արտասանուած խօսքերով քաջալերում էին նորան. գտնուեցին և գեներալի յայտնած գաղափարի պաշտպաններ։ Ամիրանովը իրան շատ վատ էր զգում, կարծես փշի վերայ նստած լինէր...

—Օրհնած է բերանդ, օրհնած, Գէօրգի Ալէքսանդրովիչ։ Հանգուցեալ հայրն էլ շատ ճարտարախօս էր, բացականչեց Շակունին։ Խմէք, պարոններ, մեր անմահական կախեթու գինին, աւելցրեց նա ուրախ—ուրախ բաժակ բաժակի խփելով հարևանների հետ։ Թող ծաղկի Կովկասը։

Այն երկիրը, որ այդպիսի կենսատու խմիչք է արտադրում, չի կարող չը ծնել և լաւ ու խելօք զաւակներ։

—Ճիշտ է, ճիշտ, հաստատեցին մի քանի քէֆովցած ձայներ։

—Նա գեղեցկուհի կանայք, այնպէս չի՞, վրայ բերեց գեներալ Կ-ն աչքով անելով Հեղինէին։ Պարոններ, կեցցէ գեղեցիկ տանտիկինը։

Վերջապէս խօսակցութեան նիւթը փոխուեց, ազատ շունչ քաշեց Ամիրանովը։

Ճաշից յետոյ տղամարդիկ շարունակում էին խմել։ Հեղինէն քաշուեց իւր սենեակը։

Հիւրերի կառարները հեռզհեռէ աւելի տաքանում էին, աղմուկը սաստկանում էր։ Իշխան Նակունին իւր սովորութեան համեմատ սկսեց պատմել զանազան արկածներ իւր պատերազմական կեանքից։ Ոմանք ուշադրութեամբ լսում էին, շատերը յենքերի տակից ծուռ—ծուռ նայում էին պատերի մօտ շարուած սեղաններին, մտածելով որ դուր են կորցնում ոսկի ժամանակը։ Ժամի տասնը մէկին հիւրերը ցրուեցին։

II

—Պէտք է շտապել. գնամ մնաս բարև անեմ Նորան, վաղը լուսադէմին պէտք է ճանապարհ ընկնել, ասում էր ինքն իրան Սահառունին։ Ամիրանոմների խնջոյքից երկու օր յետոյ։

Շատ ծանր էր Նորա համար անջատուել Հեղինէից, բայց այդ նա շատ պատճառներով անհրաժեշտ էր համարում։ Մօտ հինգ բոպէ նա մնաց կանգնած Ամիրանոմների դրան մօտ, կարծես աշխատելով սրտասղնդել, յուզմունքը դսպել, բայց խռովութիւնը քանի գնում՝ սաստկանում էր, վերջապէս նա վճռական կերպով քաշեց զանգը և քայլերն ուղղեց դէպի այն սենեակը, ուր առհասարակ նստած էր լինում Հեղինէն ճաշից առաջ։

Նա կարդում էր և մատիտով նշաններ էր անում լուսանցքներում։

—Ներեցէք, տիկին Հեղինէ, որ խանգարեցի ձեր ընթերցանութիւնը. դուք այսպիսի ժամերին հիւրեր ընդունել չէք սիրում։

—Ձեր այցելութիւնը ինձ ամեն ժամանակ զուարճութիւն է պատճառում, զգացած ձայնով ասաց Հեղինէն ձեռք տալով Նորան։ Ինչպէ՞ս տխուր էք այսօր, ինչ է պատահել, Գէորգի Ալքսանդրովիչ, աւելցրեց նա ջերմ կարեկցական եղանակով, հրաւիրելով որ նստի իւր կողքին։

—Ոչինչ... մի քիչ քէֆ չունեմ։

—Ինչու չէք դիմում բժշկի, երևում է որ տկար էք։

—Հայրենիքի օդը հազար գնդից լաւ կը բժշկի։ Նա վաղը գնում եմ Ե., եկայ ձեզ մնաք բարև ասելու։

Հեղինէն սպրտնեց։

—Մայրս կանչում է, մօտ չորս տարի է որ իրար չենք տեսել.

ես վաղուց էի ուզում մօրս տեսութեան գնալ, բայց չէր յաջողում։

—Ե՞րբ կը վերադառնաք։

—Մէկ—երկու ամսից յետոյ, չեմ կարծում որ աւելի մնամ։

—Այստեղ տխուր կը լինի առանց ձեզ, տխուր ձայնով ասաց Հեղինէն և մեկնեց նորան ձեռքը, որ նա անգիտակցաբար մօտեցրեց իւր շրթունքներին։

Հեղինէն կամաց յետ քաշեց ձեռքը, որ նա պինդ սեղմում էր, և ծիծաղեց։

—Հերիք է, հո յաւիտեան չենք բաժանւում իրարից, ասաց նա կարմրելով։

—Ես այնպէս սովորել եմ ձեզ, որ ինձ համար զգալի է և կարճատև անջատումը։ Ձեր մէջ մի տեսակ ոյժ կայ, մի տեսակ բարիք, որ դուք բաշխում էք բոլորին առանց այդ զգալու, ասաց Սահառունին այնպիսի յուզմունքով, որ Հեղինէն տաւջ նորա մէջ չէր նկատել։ Ցանկանում եմ ձեզ կատարեալ բախտաւորութիւն, մանաւանդ հոգու անդորրութիւն. իմ խորին համոզմունքով ոչ մի կին այնքան արժանի չի դորան որքան դուք։

Նորա ձայնը դողաց, երեսը կարմրեց։

—Տեսէք, Գէորգի Ալէքսանդրովիչ, մէկ-մէկ նամակ գրէք, չը մոռանաք մեզ, սիրով արտասանեց Հեղինէն։

—Էլ ում պէտք է յիշեմ որ։

Սահառունին զղջաց, որ չը կարողացաւ իրան զսպել և բերնից թռցրեց այդ խօսքերը։

Հեղինէն սովորականից աւելի քնքոյշ ու քաղցր հայեացքով նայեց նորան։

—Կացէք մեզ մօտ ճաշի։

—Խօսք եմ տուել Ասունուն. ընկերներս նորա մօտ ինձ սպասում են։

—Ճիշտ որ, ես մոռացել էի որ Միխայիլ Պետրովիչն էլ այնտեղ է ճաշելու։

Մի քանի րոպէից յետոյ նրանք տեսան իրար վերջին ողջոյնը ամենաջերմ և անկեղծ բարեմաղթութիւններով։

Երկար ժամանակ Սահառունին կանգնած մնաց պրան մօտ,—շատ ծանր էր նորա համար հեռանալ սիրած էակի տանից։ Բայց

ահա մի ոտնաձայն լսեց։ Թամարն էր։ Սահակունին մի ակնթարթում դուրս եկաւ փողոցը և առանց յետ նայելու արագ քայլերով դիմեց դէպի Ասունու տունը։՝

Հեղինէն այն աստիճան շլարել էր վերջին դէպքից, որ չը նկատեց տալի ներս մտնելը. նա ձեռքը դրեց ուսին, բայց այդ էլ չսթափեցրեց նորան։

—Ինչ է պատահել քեզ, Հեղինէ, քնած ես, ինչ է։

—Ախ, դու ես, Թամար, ներիր, չը նկատեցի քեզ, ցնցւեց Հեղինէն։ Եփեմեան էլ քեզ հետ է։

—Չէ, չէ... ես միայն այն ժամանակն եմ ազատ շունչ քաշում երբոր նա հետս չի լինում, համարեա շշնչելով արտասանեց Թամարը և վսխվխելով նայեց չորս կողմը։

Հարսը կարեկցաբար նայեց նորա վերայ ու ընկաւ մտածմունքների մէջ։ Նորա գլխիցը դուրս չէր գալիս Թամարին մարդու տալու մասին եղած խօսակցութիւնը և, չը նայելով որ մարդը խնդրել էր Թամարին բան չասել դորա մասին, նա վճռեց գոնէ ակնարկութեամբ հասկացնել նորան այդ։

—Է՛հ, մեր օրն էլ օր է էլի, ուրիշներն էլ են ասում թէ ապրում են, ես էլ եմ ասում, խեղճ—խեղճ ասաց Թամարը։

—Սխալվում ես, աւելի վատն էլ կայ։

—Օրինա՞կ։

—Անբախտ և անզգոյշ ամուսնութիւն։

Տալը զարմացած նայեց հարսին, կարծես ուզելիս լինէր ասել՝ ես միակ փրկութիւնը ամուսնութեան մէջն ես՞ տեսնում, իսկ սա ինչերից է խաբար տալիս։

Հեղինէն հասկացաւ թէ ինչ է անցնում նորա մտքովը և՝ բռնելով նորա երկու ձեռքը՝ ասաց.—Կարելի է շուտով քեզ մարդու գնալու դէպք պատահի. իսկոյն հաւանութիւն չը տաս առաջ մի լաւ տնտղի սիրտդ. տես ինչ կասի քեզ նա։ Մենակ Միքայէլի ու Եփեմիայի խորհուրդներով չը բաւականանաս, ուրիշներից էլ խորհուրդ հարցրու, մի խօսքով լաւ չափիր կշռիր։ Ներիր որ քեզ խորհուրդ եմ տալիս, զուցէ քեզ դուր չի գալիս այդ, բայց դու յետոյ կիմանաս... թէ ինչու... ես հարկաւոր համարեցի...

Թամարը մէկ կարմրում, մէկ դեղնում էր և թէև լուռ էր, բայց

Նորա աչքերը պարզ ասում էին.—թող մի դէպք պատահի քրոջից ազատուելու, երկար ու բարակ չեմ մոածել, շուտ կը վճռեմ.

Այդ ազատութեան յոյսը պայծառացրեց մի րոպէ Թամարի սովորաբար տխուր դէմքը։

—Ինչպէս ճնշուած է խեղճը, մոածեց կարեկցելով Հեղինէն Նորա գնալուց յետոյ։ Այնպէս է ման գալիս, այնպէս է խօսում որ ձայնը չի լսուում, ամէն բանից աչքը վախեցած է։

Հեղինէն շատ անգամ խղճահարուում էր մոածելով Թամարի մասին, ուզում էր առաջարկել որ փոխուի իւր մօտ, իւր տանը կենայ, բայց մարդը ասում էր որ չի կարելի քոյրերին իրարից բաժանել, իսկ երկուսին էլ տուն բերել և այդպիսով Եվեմիայի հետ ապրել—այդպիսի անձնազոհութիւն Հեղինէն իւր ոյժից վեր էր համարում։

Մինչ Հեղինէն այդպէս մոածմունքների մէջ էր, Սահառունին նոյնպէս մոայոյզ մոտենում էր Ասունու տանը։

—Ահա Գէորգը գալիս է վերջապէս, բացականչեց Թոմանեանը նայելով պատուհանից, ասա ճաշը տան, Ալէքսադր։

—Լաւ ուշացար, բարեկամ։ սոված մեռանք, մի քիչ մուայլ դէմքով ողջունեց Նորան Ամիրանովը։

—Ձուր էիք ինձ սպասում, պարոններ։

—Եթէ քեզ չը սպասէինք, ապա էլ ում պէտք է սպասէինք, վրայ բերաւ. Ասունին։

—Ինչ որ քէֆդ տեղը չի երևում, Գէորգ, հօ բան չի պատահել, սրտացաւութեամբ հարցրեց Պետրոսեանցը։

—Հա, Գէորգ, ասում են, որ այս օրերս դու մի քանի բարձրաստիճան անձնաւորութիւնների հետ շատ տաք վիճաբանել ես՝ պաշտպանելով տեղացի բնակիչներին։

—Ինչ կայ որ, անհոգ կերպով հարցրեց Սահառունին և աչքերը դարձրեց դէպի Ամիրանովը։

—Այս էլ հարիւրերորդ անգամն է որ, քեզ ասում եմ, դու շատ անզգոյշ մինչև անգամ յանդուգն կերպով ես վարուում, տհաճութեամբ նկատեց Ամիրանովը։

—Նոր բան հօ չի, հաստատեց Ասունին։

—Որ չես իմանում, ինչու ես խօսում, Ալէքսանդր, անհամբե-

բութեամբ կորեց Նորա խօսքը Սահառունին ու սկսեց պատմել վէճը

—Ինչ մի առանձին յանդգնութիւն է այդ որ, բացականչեցին մի քանիսը։

—Ես ազգասէրներիցը չեմ, բայց դուցէ ես էլ նոյնը ասէի, հանդարտ աւելցրեց Թոմաևը։

—Իսկ ես որ լինէի, այդպէս չէ, մի լաւ կը ներկէի նրանց, որ էլ չը համարձակուէին բերանները ցրուել։

Պետրոսեանցը այդ արտասանեց զայրացած ձայնով։ Նորա աչքերից կրակ էր թափւում։ Միւսներից աւելի տաք արիւն լինելով նա աւելի էր վրդովւում։

—Ինչ ասել կուզի, ով չը դիտի որ դու հերոս ես, ծիծաղեց երիտասարդներից մէկը։

—Զէ, լաչաք քցենք գլխներիս, նստենք ու ով որ թքի երեսներիս, ասենք անձրև է գալիս, մուայլ դէմքով փնփնթացրեց Պետրոսեանցը։ Քանի ծառայութեան ես մտել, սկսել ես շուքիցդ էլ վախենալ։

—Ես կուզէի իմանալ թէ ինչի համար և ում դէմ էք այդպէս տաքանում, պարոններ, կարճ կտրեց Ամիրանովը, որի երեսից այդ վէճի ժամանակ սկի չէր հեռանում արհամարհական—հեգնական ժպիտը։

—Զուր է, զուր պարոններ, ինչ էք գլուխ ցաւացնում, վրայ բերեց Թոմաևը, կորած բան է, ձեր ցնորքները վաղ թէ ուշ կը ցնդեն, նրանց ասածը ճիշտ է և որքան շուտ կատարւի այդ, իմ կարծիքով, այնքան օգտակար է մեզ համար։

—Ճիշտ որ, անհոգ կերպով հաստատեց Ասունին առանց կշռելու իւր խօսքերը։

Պետրոսեանցը իրան ուզում էր կտրատել. բոլորը, բոլորը Նորա դէմ էին։ Ամիրանովի համար գաղափարները գրօշ չարժէին, հասկանալի էր թէ ինչու էր նա հակառակ Պետրոսեանցի ասածներին։ Թոմաևը անկեղծ, ազնիւ մարդ էր. նա համոզած կ ո ս մ ո պ ո լ ի տ ա էր, իսկ միւսները, միւսները, նրանք ինչու էին ձայն պահում Թոմաևին։ Նորա յոյսը Սահառունու վրայ էր և ճիշտ Սահառունին ամենքից աւելի կարող էր Նորա գաղափարակից համարւել, բայց խոստակցութիւնից երևեց որ նա էլ յուսահատւել էր և չէր հաւատում որ ապագան կարդարացնի Պետրոսեանցի խօսքերը...

Դեռ երկար ժամանակ վիճում էին ընկերները և. ոչ մեկը միւսին չէր կարողանում համոզել։ Վերջապէս կէս գիշերին մօտ նոքա ցրուեցին։

III

Միւս օրը լուսաբացին Սահառունին ճանապարհ ընկաւ դէպի Ե.։ Քանի կառքը սլանալով Նորան աւելի ու աւելի էր հեռացնում Հեղինէից, այնքան աւելի սաստիկ էր զգում նա Նորա կարօտը։ Որ օրը որ չէի տեսնում Նորան՝ ինձ համար սև օր էր լինում, այժմ ես ինչ պէտք է անեմ առանց Նորան. գոնէ իմանայի որ նա բախտաւոր է, այն ժամանակ ոչինչ, ես Նորա համար ամեն բանի կը դիմանայի, ամեն բան կը տանէի, բայց կոյր չեմ, տեսնում եմ, որ խեղճը օրէցօր դարդից հալւում մաշւում է, մտածում էր ինքն իրան Սահառունին կուչ եկած կառքի մի անկիւնում։

Ցետոյ յիշեց նա Կատարինէին, ցաւեց որ այդ սիրուն, անհոգ երեխայի կեանքը այնքան կարճատև եղաւ, մտքի անցրեց Նորա հետ միասին անցրած կեանքի բոլոր տարիները և շատ քիչ քաղցր րոպէներ զարթնեցին Նորա յիշողութեան մէջ։ Ցետոյ նա յիշեց Հեղինէին ու դարձեալ Հեղինէին... ինչ անում էր չէր անում Սահառունին որ գլխիցը հանի Հեղինէին ու մի ուրիշ մտքի հետ ընկնի՝ չէր լինում, Նորա պատկերը չէր հեռանում Նորա աչքի առաջից, կարծես հալածում էր Նորան։

Շատ անտանելի եղանակ էր. ցրտից ու խոնաւութիւնից մարմինը սառել էր, ձիւնի փաթիլները ծեծում էին աչք ու երեսը, քամու վզզոցը ծակում էր ականջները, խորդ ու բորդ ճանապարհն էլ լրացնում էր պակասը, բայց քանի մօտենում էր նա իւր ծննդավայրին քիչ քիչ աւելի անզգայ էր դառնում դէպի ցուրտն ու բուքը և ճանապարհի անյարմարութիւնները, և աւելի դեղեցիկ էին թւում Նորան սարերն ու ձորերը, դաշտերն ու գետերը։ Վերջացան Նորա համար օտար, անծանօթ տեղերը, սկսեցին Նորա ծննդավայրի մօտակայ դաշտերն ու գիւղերը, որոնք ճանապարհի երկու կողմից կարծես ողջունում էին Նորա գալուստը։ Նրանք օտար չէին, Նրանց ամեն քարը, ամեն մի այգին յիշեցնում էին Նորան մանկութեան մի դէպք և մանկութեան վառ յիշողութիւնները կայծակի արագու-

թեամբ սկսեցին անցնել նորա մտքովը՝ լցնելով նորա սիրտը քաղցր զգացմունքով...

Անցաւ մի քիչ էլ և ահա նա տանն է իւր մօր, իւր սիրելի մօր գրկում...

Այս անգամ Սահառունին աւելի հանգիստ, աւելի սառնասիրտ էր վերաբերւում իւր հայրենակիցներին. նրանք էլ մուացել էին իրանց թշնամութիւնը և աւելի սիրալիր կերպով էին ընդունում նորան։ Առաջին անգամ որ վերադարձաւ Ե. նա պաշտօն չունէր և աջ ու ձախ ամենքին կրիտիկայի էր ենթարկում, իսկ այժմ նա իրան ծանր է պահում և վերջապէս՝ որ ամենագլխաւորն է՝ նա ատիճանաւոր է ու բաւական բարձրատիճան, էլ ի՞նչպէս կարող է Ե-ի հասարակութիւնը առաջւայ պէս վերաբերուել նորան։

—Ես գիտէի ախր, ես միշտ ասում էի, որ ձեր նման խելօք ու կրթւած մարդը շուտով կը գտնի ուղիղ ճանապարհը, ասում էր նորան մէկը պատահելիս։

—Շատ լաւ էք արել, Գէօրգի Ալեքսանդրովիչ, որ ծառայութեան էք մտել, բարեկամաբար նկատում էր մի ուրիշը։

—Ցայտնի բան է, որ աւելի լաւ է գործով պարապել, քան թէ ջուր ծեծել։ Տեսար՝ մարդ դարձար, բարեկամ, ասում էին աւելի մօտ ծանօթները։

—Գէորգ ջան, էլ Աստծուց ոչինչ չեմ ուզում, քո պէս թագաւոր որդի ունեմ, արար աշխարհքը քեզ գովում ու յարգում է, փաղաքշում էր նորան մայրը։

—Նրանց գովասանքն ինձ համար դրոշ չ՝արժի, մտածում էր այդ ժամանակ Սահառունին, բայց մօրը ոչինչ չէր ասում։

Նորա ծիծաղն ու խնդքն էր գալիս այդ մարդկանց վերայ, որ մարդու արժանաւորութիւնը պաշտօնի ատիճանովն էին չափում ու բացի իրանց ընչին անձնական շահերից ոչնչի վերայ չէին մտածում, բայց այնպէս չէր վրդովւում, չէր տաքանում ինչպէս վեց տարի առաջ, երբ որ նորա երիտասարդ ու անփորձ սիրտը դեռ չէր պընդացել կեանքի դառն հարւածներից, երբ որ նա դեռ վառւում էր ոգևորութեամբ ու գործունէութեան փափագով։

Ե. գալուց մի քանի օր յետոյ Սահառունին սկսեց եռանդով պարապել տնտեսութեամբ. տնային գործերը կարգի բերեց ու սկսեց

ծանօթանալ իրանց կալուածի հետ, որ քաղաքից 10 վերստ հեռու էր։

Միայն սեպհական կալուածը չէր, որ գրաւում էր Սահառունու ուշադրութիւնը. անդադար նա պտտում էր շրջակայ գիւղերն ու կալուածները, ուսումնասիրում էր կալուածատէրերի ու գիւղացիների տնտեսավարութիւնը։ Այդ ուսումնասիրութիւնից նա այն եզրակացութեանն եկաւ, որ տնտեսական կողմից ոչ ժողովուրդը ոչ էլ կալուածատէրերը առաջ չեն գնում. նո՛յն նահապետական տնտեսութիւնը, նո՛յն անդրջրհեղեղեան գործիքները։ Վիճակագրական տեղեկութիւններ հաւաքելով, նա համոզուեց որ՝ չը նայելով բարեյաջող կլիմայական պայմաններին ու հողի բարերերութեանը՝ հողատէրերի ու հողագործների եկամուտները համեմատաբար չնչին են և որ անհրաժեշտ է փոխել տնտեսութեան եղանակը։ Թէև արտասահմանում եղած ժամանակ Սահառունին մանագետօրէն չէր պարապել գիւղատնտեսութեամբ, այլ ուսումնասիրել էր տեխնիքական գիտութիւնները, բայց էլի նա շատ հեշտ կարող էր հասկանալ այդ անմխիթար դրութեան պատճառները։ Նա տեսնում էր, որ ձգտումն չը կայ փոփոխութիւններ մտցնել տնտեսութեան մէջ, թողնել հինը և ընդունել նորը, կատարելագործուածը. ժողովուրդը տգէտ է ընդհանրապէս և զուրկ է տեխնիկական տեղեկութիւններից. կալուածատէրերը ժողովրդից բարձր չեն իրանց ոչ ընդհանուր ոչ էլ տեխնիկական զարգացմամբ և իրանք չեն պարապում իրանց կալուածներում գիւղատնտեսութեամբ, որ ինչպէս արտասահմանում իրանց շատ անգամ օրինակելի տնտեսավարութեամբ ծանօթացնէին ժողովրդին նորաձև տնտեսութեան և կատարելագործուած գործիքների հետ, այլ աւելի լաւ են համարում յանձնել ամեն բան տգէտ ու կեղեքիչ կառավարիչների ու ապրել քաղաքում շուայլելով կալուածների եկամուտները։

Աչքի առաջ ունենալով այդ բոլորը և այն որ ինքը կարող էր այդ ասպարէզում օգուտ բերել իւր համազաւառացիներին առանց նրանց իւր դէմ գրգռելու, Սահառունին վճռեց կարգի բերել իւր կալուածը, պարապել գիւղատնտեսութեամբ, գործադրելով այն բոլոր կատարելագործութիւնները, որոնց հասել է գիտութիւնը և պրակտիկան և որոնք մատչելի էին շրջակայ բնակիչներին ու համապատասխանում էին տեղային պայմաններին։

Սահառունուն ամենից շատ զարմացնում էր այն, որ բոլոր երկ-

բագործական աշխատանքները կատարում էին ամենանկատար դոր-
ծիքներով և որ ժողովուրդը կարծես ամենևին կարևորություն չէր
զգում ժամանակը և աշխատանքը տնտեսելու։ Ցափշտակող Սահ-
ռունու երևակայության մէջ արդէն պատկերանում էր ապագայ բա-
րեկարգ ագարակը, ֆերման, շոգեշարժ գործիքներով, գիւղական
ուսումնարանով, իւր շնորհիւ բարօրության մէջ ապրող ու յառա-
ջադիմության բարիքներն հասկացող գիւղացիներով...

Այդ միտքը օրէցօր աւելի ու աւելի հաստատուում էր Նորա մէջ,
բայց նա իսկոյն չէր ուզում իրագործել՝ շուզելով խարխափելով վա-
րել իւր տնտեսությունը և իւր սխալներով անվստահություն ազդել
գիւղացիներին դէպի ձեռնարկությունը։ Այդ պատճառով նա վճռեց
կրկին գնալ արտասահման, լաւ ուսումնասիրել գիւղատնտեսությունը
և միևնոյն ժամանակ գնել անհրաժեշտ գործիքներն ու նիւթերը։

Արձակուրդի ժամանակամիջոցը վերջանում էր, իսկ Սահառունու
կարծես մտքովն էլ չէր անցնում Թ-ս վերադառնալ։ Մի անգամ
դիւղից յետ դառնալով նա իւր սեղանի վերայ տեսաւ երկու նամակ։
Ընկերներից էին։ Նրանք շտապեցնում էին Նորան, յիշեցնում էին
որ արձակուրդի ժամանակը վերջանում է, զգուշացնում էին որ չ'ու-
շանայ, որովհետև Նորա մեծաւորը, որ Նորան շատ լաւ աչքով չէր
նայում, կարող էր օգուտել այդ հանգամանքից և զրկել Նորան պաշ-
տօնից։ Սահառունին թափ տալով ձեռքը ու սկսեց քայլել սենեակում։
Ցանկարծ Նորա աչքովն ընկաւ մի նամակ, որ դրած էր սեղանի միւս
ծայրում։ Սիրտը ճիշդ վկայեց, մէկ գծի վերայ—Հեղինէի ձեռքն էր։
Նա սաստիկ ուրախացաւ ու շտապով ճղեց ծրարը։ Կարդաց, կրկին ու
կրկին կարդաց նա այդ մտերմական ու քնքոյշ զգացմունք-
ներով բուրող նամակը և պաշարուած քաղցր մտածմունքներով
պարկեց քնելու։ Բայց քունը չէր մօտենում Նորա աչքերին. Հեղինէի
պատկերը, կարծես ինքը Հեղինէն կանգնած էր Նորա առաջ. զարթ-
նում էին քաղցր յիշողություններ...

Միւս օրը Սահառունին ուզում էր ճանապարհ ընկնել. բայց
Վլադիկաւկազից փեսայի մահուան բօթը հաղորդող հեռագիրը սա-
պեց Նորան յետաձգել գնալը։ Նա չէր իմանում ինչպէս յայտնի այդ
գոյժը իւր մօրը, ինչպէս պատրաստի Նորան, որ Նորա դարդտոտ սիրտը
յանկարծ սաստիկ չը խոցւի այդ լուրից։ Երեք շաբաթ էլ մնաց Նա

Ե.-ում, հազար ու մի զգուշութիւններով յայտնեց մօրը ցաւալի լուրը, մի կերպ հանգոտացրեց նորան, փոստացաւ որ Թ.-սից շուտով կերթայ Վլադիկաւկազ քրոջը կը տեսնի, տիրութիւն կանի, ու ծանապարհ ընկաւ։

Գնալուց առաջ նա բոլորովին կարգի բերեց իրանց գործերը, հաշիւները տեսաւ, խարդախ կառավարչին հեռացրեց, տեղը մի վստահելի մարդ նշանակեց և խոստացաւ մօրը, որ մէկ-երկու տարուց յետոյ վերջնականապէս կը տեղափոխի գիւղը գիւղատնտեսութեամբ պարապելու։ Մայրը ուրախանում էր երբոր որդին պատմում էր նորան թէ ինչպէս կը կատարելագործի տնտեսութիւնը, գործարան կը հիմնի և այլն։ Որդու հայեացքներն ու ծրագիրներն նորա համար բոլորովին նոր, անծանօթ բաներ էին և նա այդ բոլորին վերաբերում էր մի տեսակ երկիւղածութեամբ։

IV

Սահառունու գնալուց մօտ երկու ամիս անցած Թ.-սի հայ ինտիլիգենցիայի համար տօն էր,—բացւել էր արհեստագիտական բաժանմունքով ծխական օրիորդաց դպրոցը։ Հոգաբարձուները, որոնցից մեծ մասը յանձն էր առել ձրիաբար դաս տալ դպրոցում, խնդրում էին Հեղինէին որ նա ստանձնի նոր բացւած ուսումնարանի կառավարութիւնը։ Նա հրաժարւում էր, պատճառ բերելով իւր ձեռագործ չը գիտենալը և խօստանում էր մօտիկ ապագայում մի քանի առարկաներից ձրի դասեր վերցնել։

—Ի՞նչ համակրութեամբ էինք վերաբերում դուք գէպի մեզ, երբ մենք աշխատում էինք բանալ այդ դպրոցը և այժմ յանկարծ հրաժարւում էք մեզ օգնելուց, չէ, դուք պէտք է կանգնէք այս գործի գլուխը, տաք—տաք խօսում էր Պետրոսեանցը, աշխատելով համոզել Հեղինէին։

Պետրոսեանցին ու Սահառունուն էր պատկանում այդ գործի նախաձեռնութիւնը։

Վերջապէս Հեղինէն՝ մարդու կամքի հակառակ՝ համաձայնեց ընդունել դպրոցի տեսչութիւնը, այն պայմանով որ նորա տալը Թամարը, որ հիանալի ձեռագործ գիտէր, իւր օգնականը լինէր։

—Որքան կուրախանար Դէօրզի Ալէքսանդրովիչը, եթէ այստեղ լինէր, մտածեց Հեղինէն։

Նա այնպէս սովորել էր մոսնակից անել Սահառունուն իւր մըտածած—զգացածին, որ նորա բացակայութեան ժամանակ էլ մի գործ բռնելիս կարծես պտռում էր նորա քաջալերիչ հայեացքը։

Սահառունու պատկերը օրէցօր աւելի ու աւելի յաճախ էր զարթնում նորա սրտում, բայց Հեղինէի զգացմունքը դէպի Սահառունին տարբեր էր նորա դէպի Հեղինէն ունեցած զգացմունքից.—այդ զգացմունքը Հեղինէի սիրտը աւելի հանգստացնում էր, քան բորբոքում։

Սահառունու գնալուց յետոյ երրորդ ամիսն էր։ Մի օր Հեղինէն պատրաստում էր գնալ Թամարի մօտ, որ նորա հետ միասին գնային ուսումնարան։ Այդ օրը դժուար է ասել թէ ինչու նա աւելի յաճախ էր յիշում Սահառունուն և աւելի սաստիկ զգում նորա բացակայութիւնը։ Նա արդէն ուզում էր գլխարկը դնել, որ յանկարծ համարեա վազելով ներս մտաւ Ասունին։

Հեղինէն սաստիկ անհանգստացաւ. ինչո՞ւ պէտք է Ասունին այդպէս վազ գար նրանց մօտ, ինչո՞ւ էր նա այդպէս վրդովուած։

—Իսնչ է պատահել, Ալէքսանդր Վասիլիչ։

—Սահառունուն կարող են պաշտօնից զրկել. նորա բացակայութեան ժամանակ թշնամիները տակը փորել են և զրգռել են նորա դէմ իշխանաւորներին. ուզում են հեռացնել պաշտօնից։

Ինչո՞ւ, ի՞նչ պատճառ են բերում, ասէք խնդրեմ, կարո՞ղ ենք մենք օգնել, ի՞նչ կարող ենք անել, պէտք է աշխատել։

—Աւելորդ է ձեզ բոլոր մանրամասնութիւնները պատմել, դուք ինքներդ լաւ գիտէք, որ մեր մէջ Սահառունու պէս մարդկանց համար դժուար է ամենքի հետ եօլա գնալ։ Խնդրէք, համոզեցէք Միխայիլ Պետրովիչին, որ նա կոմսին խնդրի, նա կոմսի վրայ մի քիչ ազդեցութիւն ունի։

Ասունին մի քիչ հանգստացած գնաց Ամիրանովների տանից։

Հեղինէն յետաձգեց ուսումնարան գնալը և անհամբեր սրտով սպասում էր մարդու ծառայութիւնից տուն գալուն։ Զայրացած անիծում էր նա այն մարդկանց, որոնք նորա կարծիքով Սահառունու ճկութիւն չարժեն և համարձակ ում են պարսաւել, զրպարտել նորան։

Ահա վերջապէս զանգը խփեցին։ Հեղինէն ինքը գնաց դուռը բանալու, բայց այդ Եփեմիան էր։ Մի քանի րոպէից յետոյ կրկին զանգը քաշեցին, այս անգամ աւելի պինդ,—Հեղինէն չը սխալուեց, մարդն էր։

—Նուա արա, Հեղինէ, ճաշ տուր ուտեմ, սաստիկ սոված եմ։

—Լսել ես, Միշէլ, որ Գէօրդի Ալէք...

—Լսել եմ, լսել, անհամբերութեամբ կտրեց նորա խօսքը Ամիրանովը։ Սա կերակուրը տան։

—Միշէլ, մենք պէտք է օգնենք նորան...

—Հլա մի թողէք հանգստանայ, բերանը մի կտոր բան դնի, տեսնում էք խեղճը ինչպէս յոգնած ու սոված է, շողոքորթութեամբ մէջ ընկաւ Եփեմիան։

Հեղինէն գիտէր, որ մարդը սոված ժամանակ վատ տրամադրութեան մէջ է լինում և վճռեց ճաշից յետոյ խօսել հետը Սահառունու մասին, բայց ճաշի վերջին Ամիրանովը ինքը սկսեց խօսել։

—Դու զարմանում ես, Հեղինէ, որ Սահառունուն զրկում են պաշտօնից, իսկ ես տեսնելով նորա անխելք վարմունքը վաղուց էի սպասում որ այդ այդպէս կը լինի։

Այդ ասելով Ամիրանովը կոնծեց մի բաժակ գինի և սկսեց այնպէս ինքնագոհ դէմքով շփել ձեռները կարծես մի երևելի բարի գործ էր կատարում։

Կինը շարած նայում էր նորա վերայ։

—Զարմանում եմ, Միշէլ, դու քո մօտ ընկեր մասին այնպէս ես խօսում՝ կարծես թշնամի լինի։

—Իմ կարծիքով, Միքայէլը իրաւունք ունի նորան թշնամաբար վերաբերուելու։

—Չէ, Եփեմիա, սխալում ես, ես նորան իբրև բարեկամ սիրում եմ։

—Դուք, ինչպէս երևում է, չէք հասկանում թէ մենք ինչի մասին ենք խօսում, բարկացած նկատեց Եփեմիային հարսը։ Թողէք ես ու Միքայէլը խօսենք։

—Որ այդպէս է՝ ուր եմ Ֆեում այստեղ, գնամ տուն, նեզացաւ Եփեմիան։

—Բան չը կայ, Ֆեայ, մենք գաղտնիք չունինք, ասաց Ամիրանովը ու չը թողեց որ գնայ։

Հեղինէն թախանձագին հայեացքով նայեց մարդուն և, համոզելով որ երկուսով գնան առանձնասենեակը մի քանի բոպէ խօսելու, սկսեց աղաչել որ աշխատի հերքել Սահառունու թշնամիների նորա վրայ բարդած զրպարտութիւնները։

—Զարմանալի բան է, Հեղինէ, ով է քեզ ասել, որ իմ ձեռքիցս բան կը գայ, ես ինչ կարող եմ օգնել։

—Բոլորն էլ ասում են, որ դու շաւ ես կոմսի հետ։

—Միամիտ ես, շատ միամիտ, Հեղինէ։ Այդպիսի մարդիկ մարդու հետ լաւ են լինում քանի որ մարդ նրանցից կախու�կամ կարօտութիւն չունի, բան չի խնդրում։ Կոմսը այնպէս դրգռուած է Սահառունու դէմ, որ հէնց ես մի ծպտուն եմ հանել նորա խաթեր, ես էլ աչքիցը կ'ընկնեմ։

—Է, սատիկ սխալւում էի ես որ քեզ բարեկամութիւն ճանաչող մարդ էի համարում։ Ես կարծում էի, որ դու քեզ ու քեզ առանց ուրիշի խնդրելու կը զգաս որ պէտք է օգնել ընկերդ, իսկ այժմ ինչեր եմ լսում քեզնից, զայրացած ասաց Հեղինէն ու ուզում էր դուրս գալ սենեակից, բայց Ամիրանովը ինչ-որ յիշելով կանգնացրեց նորան ու քաղցրութեամբ ասաց.

—Լաւ, մի բարկացիր, կ'աշխատեմ ինչ որ ձեռքիցս գայ անել, բայց հաւատացիր, հոգիս, որ նա երբէք չի ուզուի։

Կինը շւարած նայում էր մարդուն։

—Հա, լաւ յիշեցի, Հեղինէ, մոռացայ քեզ ասեմ, որ կոմսուհին քեզ հրաւիրում է վաղը ճաշի։

—Ինչպէս կարող եմ այս դրութեամբս հիւր գնալ։

—Ոչինչ, մեծ հասարակութիւն չի լինի, ընտանեկան ճաշ կը լինի, կոմսը շատ խնդրում էր որ անպատճառ գնաս, աղաչում էր Ամիրանովը կնոջը. իսկ այնտեղ, Հեղինէ, թէ ինձ սիրում ես, շողքորթութեամբ շարունակեց նա, որքան կարող ես քաղցր վարուիր կոմսի հետ. ես էլ կաշխատեմ յարմար բոպէ գտնել, ու խնդրել Սահառունու համար։

Հեղինէն բռնեց մարդու ձեռքը և, ուղիղ աչքի մէջը նայելով, ասաց։

—Ազնիւ խօսք տուր, որ խոստումդ կը կատարես։

—Կ'աշխատեմ ինչ էլ լինի խնդիրքդ կատարել, իսկ դու, սիրունս, աշխատիր լաւ հագնուել։ Տես, շատ մի տաքացիր Սահառունու համար, թէ չէ ես էլ նախանձել դիտեմ, կատակով ասաց նա համբուրելով կնոջը։

—Դու զիտես, Միքայէլ, որ ես Գէօրգի Ալեքսանդրովի վրայ նայում եմ իբրև եղբոր վրայ և նորա կնոջը քրոջ նման սիրում էի։

—Լաւ, լաւ, կատակ էի անում, ծիծաղեց Ամիրանովը, իսկ այժմ քեզ առանց կատակի ասում եմ, որ լաւ ուշադրութիւն դարձնես հագուստիդ վերայ, կինը պէտք է միշտ հոգս տանի իւր շէնք ու շնորհքի վերայ։ Վաղուայ համար պատրաստիր կապոյտ մետաքսէ շորդ, անցեալ անգամ ամենքն ասում էին որ քեզ սազում է նա։

Հեղինէն ծիծաղեց ու խոստացաւ կատարել նորա ցանկութիւնը։

—Ուրիշ բան չունի. հէնց այն է, որ ինձ տիկնի նման զարդարի, անցաւ նորա մտքովը,

Միւս օրը Հեղինէն նստած կարդում էր. Ամիրանովը ներս մտաւ ու սկսեց շտապեցնել, որ շուտ անի պատրաստուի հիւր գնալու։

—Ժամանակ շատ կայ, Միքայէլ, ինչ ես շտապում, մինչև ճաշ ժամ ու կէս է մնում դեռ։

—Զէ՞ պէտք է հագնուես, գրստուես։

—Դու էլ ինչ ես այսօր ընկել իմ հագնուելու հետ, սկի չես մոռանում։

Ամիրանովը, երբ որ տեսնէր կնոջը գիրք կարդալիս, կասէր հեգնօրէն, որ կանայք՝ քանի որ աննպատակ են ապրում՝ «գիրք են խազում», ինչպէս որ երեխայ ժամանակները տիկին էին խազում, բայց հէնց որ մայր դարձան գրքերը դէն կը քցեն։

Ժամի չորսին Ամիրանովն ու կինը գնացին ճաշի։ Մեծամեծների ճաշը նորանով է նշանաւոր, որ ժամերով մնում են նստած սեղանի շուրջը, պահպանում են զանազան ձանձրալի ձևականութիւններ ու զբաղւում են դատարկ խօսակցութեամբ։

Հեղինէն՝ հետևելով մարդու խորհրդին՝ ոչ միայն առաջուայ պէս արհամարհաբար չէր վերաբերւում կոմսի կաւալերութեանը, այլ և աշխատում էր զօռել իրան և՝ որքան կարող էր՝ քաղցր

վարել Նորա հետ։ Ճաշից յետոյ տեսնելով որ կոմսը լաւ տրամադրութեան մէջ է, նա մօտեցաւ մարդուն ու փսփսաց ականջին։ Ամիրանովը գլխով հաւանութեան նշան արեց ու մի քանի րոպէից յետոյ կոմսի յետևից գնաց տուանձնասենեակը։ Իսկ Հեղինէն գնաց հիւրասենեակը, ուր տիկինները սուրճ էին խմում։ Նա իրան լաւ չէր զգում. քէֆը վատ էր։ Կոմսուհին այդ նկատեց ու տարաւ Նորան իւր ննջարանի՝ կողքի սենեակը, որ այնտեղ մի քիչ հանգըստանայ։

Հեղինէն թեք ընկաւ փափուկ բազմոցի վերայ։ Բազմոցը դրած էր տուանձնասենեակի դրան մօտ, այնպէս որ նա ակամայ լսում էր կոմսի ու իւր մարդու խօսակցութիւնը։ Լսում էր և ականջին չէր հաւատում։ Ամիրանովը փոխանակ Սահառունու համար խնդրելու՝ իւր համար էր ինչ-որ խնդրում... լա՛ւ, կոմսը ընդունեց խնդիրքը... ահա Սահառունու անունն են տալիս... Հեղինէի սիրտը սկսեց բաբախել... բայց զարմանալի բան է Ամիրանովը փոխանակ խնդրելու, փոխանակ պաշտպանելու իւր ընկերոջը, վատաբանում է Նորան, զրպարտում է, անւանում է Նորան խառնակիչ, ասում է որ նա իւր գործը չի հասկանում, ռուսերէն էլ չը գիտի...

Հեղինէի սիրտը տակն ու վերայ եղաւ։

—Ստոր, վախկոտ արարած, խաբեբայ, ասաց ինքն իրան Հեղինէն։ Մեծաւորների աչքը մտնելու համար ամէն բան կանի, բաւական չի որ, վախենալով թէ յանկարծ կոմսը իւր մասին կարծիքը մի քիչ կը փոխի, չի կատարում իւր պարտականութիւնը դէպի իւր բարեկամը, դեռ զրպարտում էլ է Նորան... Մարդ որ մի անգամ խղճմտանքը կորցրեց, էլ դժւար թէ ուղղւի, իսկ որ նա խիղճ ասած բանից զուրկ է, այժմ ինձ համար օրը—ցերեկի նման պարզ է... Չէ, զուր եմ աշխատում, ես այդպիսի մարդու սիրել չեմ կարող. որքան ստոր է նա Նորանից...

Հեղինէի աչքերը կատաղութիւն ու զայրոյթ էին արտայայտում. յետոյ կարծես ինչ-որ մի յիշողութիւն փոխեց նրանց արտայայտութիւնը. Հեղինէի հայեացքը կանգ առաւ մի կէտի վերայ, նա սկսեց անթարթ նայել այդ կէտին, կարծես մոռացաւ ամէն բան, որ իրան շրջապատում էր և մտքով վերացաւ, սլացաւ ուրիշ տեղ՝ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ...

Քառորդ ժամից յետոյ Հեղինէն սաստիկ վրդովւած ու տխուր գնաց տուն։

Միւս առաւօտը նա սաստիկ թոյլ էր զգում իրան. ներքին կռիւը ուժասպառ էր արել նորան։

Արեգակը ուրախ լուսաւորում էր նորա սենեակը. հրաշալի եղանակ էր, նա չը կարողացաւ իրան զսպել ու վեր կացաւ անկողնիցը որ պատուհանից նայի իւր սիրելի ձիւնապատ սարերին, բայց չէր կարողանում ոտքի վերայ կանգնել, մի քանի քայլ արեց, ընկաւ բազմոցի վերայ ու սկսեց լալ դառն արտասունքներով։

—Միթէ ելք չը կայ. միթէ յաւիտեան ես կապւած պէտք է մնամ այնպիսի մարդու հետ, որին ես չեմ կարող սիրել։ Հանկարծ նա ու խորը մոռածմունքներ պաշարեցին նորա հոգին։

Հեղինէն ընդ միշտ բաժանւում էր իւր փայփայած խաբուսիկ ցնորքներից. նա մեղադրում էր իրան, որ այդքան ուշ էր հասկացել, որ զուր էին իւր բոլոր յոյսերը, զուր էր պատում իւր մարդու մէջ այն ինչ որ պէտք էր իւր սրտին, ինչին ծարաւում էր իւր հոգին։

Երկար ժամանակ այդպէս նստած էր Հեղինէն հերարձակ, գլուխը յենած բազմոցի մէջքին։ Յանկարծ նա սթափւեց մի թեթև շոշափումից։

—Ինչպէս ես զգում քեզ. Հեղինէ։ Ես աշխատում էի որքան կարելի է զգոյշ հեռանալ այստեղից, որ չը խանգարեմ հանգիստդ։

—Ինչպէս, միթէ դու այստեղ էիր քնել, այնպիսի ձայնով հարցրեց կինը կարծես օձի խայթելուց վախեցաւ, և զգւանքով երեսը շուռ տուեց մարդուց։

—Ինչու այդպէս վտխեցար. հօ առաջին անգամը չի որ մենք միասին ենք լինում...

—Հա, հա... ես մոռացել էի... հեռացէք, ինձ մենակ թողէք, խնդրում եմ...

—Ի՞նչ է պատահել քեզ երէկ, Հեղինէ։ Սաստիկ վախեցայ, երբ որ Կոմսուհին ինձ ասաց որ հիւանդացել էիր. ուզում էի իսկոյն տուն գալ, բայց...

—Երանի սկի վերադարձած չը լինէիր, այրւած, կսկծող սրտով ընդհատեց նորա խօսքը Հեղինէն։ Ախ, ինչու մենք իրար հանդիպեցինք։

—Հեղինէ, ինչ է պատահել քեզ, շարաչ բացականչեց Ամիրանովը։ Լա՛ւ վարձատրութիւն է. ես ամեն հնարք գործ դրեցի Սահառունուն օգնելու համար, չը վախեցայ մինչև անգամ նորանից որ իմ անունս կարող է կոտրուել...

—Լռի՛ր. ինչպէս ես կարողանում առանց կարմրելու սուտ ասել։ Չը լինի ինձ հաւատացնես, որ ինքդ Կոմսին աւելի չէիր գերադասում նորա գէմ։

Մարդը մի րոպէ շփոթուեց և ապշած նայում էր կնոջ վրդովուած, զայրացած դէմքին։ Նորա սրտում կասկած զարթնեց, թէ մի գուցէ կինը լսել է իրանց խօսակցութիւնը, բայց իսկոյն այդ կասկածը դէն քցեց և հաստատ կերպով պատասխանեց.

—Երդւում եմ քեզ, քո արևը վկայ, իմ սէրս վկայ, մեր ապագայ զաւակի արևը վկայ, որ ճիշտ եմ ասում։

—Խա՛չը դժւար է չը հաւատալ, դառը ծիծաղեց Հեղինէն, եթէ ես իմ ականջովս լսած չը լինէի ձեր խօսակցութիւնը, ով է իմանում ես էլ հաւատայի ու նորից խաբուէի։ Այժմ տեսնում եմ, որ քո ամբողջ կեանքը խաբեբայութիւն է եղել։ Ով որ այդպէս հիանալի կերպով կարողանում է կեղծել, նա շատ ստոր մարդ պէտք է լինի, ասում էր Հիղինէն հեռղհեռէ բարձրացնելով ձայնը և զզւանքով նայելով մարդուն։

Ախ, դառնութեամբ աւելցրեց նա, ինչ ասես չէի տալ, որ իմ ապագայ զաւակս կրթուէր հեռու այն կեղտոտ սովորութիւններից, որոնք արմատացել են ձեր մէջ։

Մի քանի րոպէ տիրեց խորին լռութիւն։ Հեղինէի հայեացքը խիստ էր և արհամարհական, նորա սեղմած շրթունքների վերայ երևում էր դառն հեգնական ժպիտ, իսկ սիրտը սառն էր, սաստիկ սառը, կարծես նորա բոլոր ջերմ, քնքոյշ, դորովալից զգացմունքները յանկարծ մեռնելով տեղի էին աւել արհամարհանքի, դառն թախիծի ու հեգնութեան։ Ոչ մի ժամանակ նորա մէջ այնքան սաստիկ չէր արտայայտուել մոքի համարձակութիւն, հոգու ազատութիւն և նորութեան ծարաւ՝ ինչպէս այդ րոպէին, ոչ մի ժամանակ նա այդքան լուրջ կերպով չէր վերաբերուել կեանքի ստոր ու կեղտոտ կողմերին, կարծես նորա աչքերը յանկարծ հրաշքով բացուեցին և նա տեսաւ իւր առաջ անյատակ անդունդ...

Ամիրանովը տեսաւ, որ անկասկած կինը լսել է իւր ու կոմսի խօսակցութիւնը։ Սուտը բռնուել էր և նա ցնցուել էր շփոթուած, ամօթահար։ Ցանկարծակի բռնուելով, նա երկար ժամանակ չէր կարողանում մի հնարք գտնել կնոջ առաջ արդարանալու համար։

Հեղինէ, զուր ես ինձ վերայ յարձակւում, մի քիչ անվճռական կերպով սկսեց խօսել Ամիրանովը։ Դու, ինչպէս երևում է, չես ճանաչում կոմսին։ Այդպիսի մարդկանց հետ բանը ուղիղ տանել չի կարելի։ Մարդ պէտք է առաջ սկսի նրանց խաթրովը գնալ, նրանց ասածին ձայն պահել, ցոյց տայ թէ համաձայն է, նոյն կարծիքին է, յետոյ քիչ քիչ սկսի իւր գործը առաջ տանել, կակղացնել, համոզել։ Ափսո՛ս, շատ ափսո՛ս, որ դու մինչև վերջը չես լսել մեր խօսակցութիւնը. այն ժամանակ այսպէս չէիր խօսիլ։

—Հերիք է, հերիք, Աստծու սիրուն, հեռացէք այստեղից։ Մեր մէջ այսուհետև ամեն բան վերջացած է։

—Խաչը, Հեղինէ, այնպէս ես խօսում, կարծես սիրեկանիդ անպատուած լինեմ, յանկարծ թռցրեց բերնիցը Ամիրանովը, բայց իսկոյն զղջաց որ այդպիսի անտեղի նկատողութիւն արեց։

—Կարող ես կարծել. քո պէս անսիրտ, եսական մարդիկ ի՞նչ կարող են հասկանալ, որ կինը կարող է մաքուր, բարեկամական զգացմունքով վերաբերուել մի որ և է տղամարդու։ Դու զուր ես քեզ միամիտ ձևացնում, դու լաւ հասկանում ես, որ իմ զարոյթիս պատճառն այն չի որ Սահառունին զրպարտութեան առարկայ է եղել, նա փառք Աստծու ինքն էլ կարող է իրան պաշտպանել, այլ քո վերին աստիճանի զզուելի վարմունքը։ Ես երբէք չեմ կարող մոռանալ և ներել այդ ստորութիւնը։ Իմացած կաց, որ ես կարող եմ յարգել և սիրել միայն այնպիսի մարդու, որ իւր բարոյական պարտականութիւնները բարձր է դասում իւր անձնական շահերից։

Ասաց Հեղինէն ու զայրոյթով լի հայեացք ձգելով մարդու վերայ դուրս եկաւ պատշգամբը ներքին կրակը հովին տալու։

Ամիրանովը ինքն իրան մխիթարում էր, մոռանալով որ կնոջ զայրոյթը շուտով կը նստի, հերիք է որ ինքը սկսի աւելի քաղցր վարուել հետը, աւելի սէր ցոյց տալ և աշխատի խաբել նորան, ինչպէս միշտ յաջողել էր նորան, բայց այս անգամ նորա յոյսը զուր եղաւ։

Նորան մոքոմն էլ չէր անցկենում, որ Հեղինէի զայրոյթը բոպէական բռնկումն չի, այլ լուրջ զգացմունք, սկիզբն ներքին հոգեկան յեղափոխութեան։ Հեղինէի սրտում առաջ գոնէ յոյս էր մնում, որ ամեն բան ապագայում կը փոխուի, Նրանց յարաբերութիւնները կը ստանան այն ձևը, որ Նորան ցանկալի էր։ Այժմ այդ յոյսը, առաջուայ զգացմունքների միակ յենարանը, ոչնչացաւ։

Հեղինէն ոչ մի ժամանակ այնպէս սաստիկ չէր զգացել որ ինքը մենակ է որքան այդ ժամանակ։ Նա սաստիկ տխուր էր և օրէցօր նկատելի կերպով հալւում, մաշւում էր, բայց միևնոյն ժամանակ այժմ Նորա շարժմունքներում ու դէմքի արտայայտութեան մէջ աւելի վճռականութիւն ու լրջութիւն էր երևում։

—Ես չեմ կարող էլ մարդուս հետ ապրել, ես ատում եմ Նորան, պէտք է աշխատել մի ելք գտնել, օրը մի քանի անգամ կրկնում էր ինքն իրան Հեղինէն, բայց չէր իմանում ինչպէս անի որ ազատուի իւր այժմեան անտանելի դրութիւնից։ Սաստիկ յուզմունքը, յղիութիւնը, օր է օր սպասող զաւակի մօտալուտ ծնունդը թոյլ չէին տալիս Նորան սառը մտածել այդ հարցի մասին ու վճռել։

(Կը շարունակուի)